Արձանագրություն N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար՝ գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հայկ Սարգսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ,

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

*Նիստից բացակայում է Արմինե Ալիխանյանը (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:*

**1. Տեղեկություններ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

1.1 Առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպված միաժամանակյա բանակցություններին ներկա է գտնվել <<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ն և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն:
Միաժամանակյա բանակցություններին ներկա չի գտնվել <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն:

Միաժամանակյա բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա մասնակիցները իրենց՝ հայտով առաջարկած գները թողեցին անփոփոխ:

1.2 Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը որոշեց՝
ա) համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ. կետի՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած,
բ) հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/34» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է),
գ) 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՍԱՔԻ>> ՍՊԸ –ին,
2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի քարտուղարին.

2.1 Սահմանափակվել Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցում:

2.2 Սահմանափակվել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 03-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Սահմանափակվել Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2019 թվականի դեկտեմբերի 05-ին, ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ

Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Հայկ Սարգսյան

Էդգար Մելքոնյան

Գրիգոր Գաբրիելյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան